



### ՇՆՈՐՀԱՆՆԵՍ ՀԲՄ-ՈՒՄ

17.03.2015



Հայաստանի բանկերի միության գրասենյակում կայացավ շնորհանդես, որը նվիրված էր 2014թ-ի անշարժ գույքի շուկայի վերլուծության արդյունքներին: Ըստ 2013թ-ի հոկտեմբերին ստորագրված մտադրությունների մասին հուշագրի, Հայաստանի բանկերի միությունը և «Օլիվեր Գրուպ» գնահատման ընկերությունը համագործակցում են

անշարժ գույքի շուկայի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման շուրջ:

«Օլիվեր Գրուպ»-ի հիմնադիր Հրայր Հակոբյանը նշեց, որ ք. Երևանում 2014թ-ին դրամային արտահայտությամբ միջին գնային առաջարկը բազմաբնակարան շենքերում աճել է 6,1%-ով (առանց Նուբարաշենի) և կազմել 323 հազար դրամ 1ք.մ. համար:

Իր հերթին ՀԲՄ-ի նախագահ Սամվել Ճզմայանը միջոցառման մասնակիցներին ներկայացրեց հիփոթեքի հիմնական ցուցանիշները.

- Եթե 2013թ-ի արդյունքներով հիփոթեքային վարկավորման ընդհանուր ծավալը Հայաստանում կազմել է 143,2 մլրդ դրամ (տարեկան աճը՝ 12,4%), իսկ 2014թ-ին՝ 172,4 մլրդ (տարեկան աճը՝ 20%), - ասել է Ս. Ճզմայանը: - Ասեմ ավելին. նույնիսկ ս.թ. հունվար-փետրվարին հիփոթեքային վարկավորման ծավալներն էապես չեն փոխվել այն դեպքում, երբ այդ ամիսները հիփոթեքային շուկայի ակտիվության առումով ավանդաբար աչքի չեն ընկնում: Այսպիսով, բանկերն ավելացնում են տրամադրվող հիփոթեքային վարկերը և անում են դա այն դեպքում, երբ շինարարության ոլորտը, ըստ ՀՀ ԿԱ Ազգային

վիճակագրական ծառայության, 2013թ-ին նախորդ տարվա համեմատ 10,8%-ով անկում է ապրել, իսկ 2014թ-ին 2013թ-ի համեմատ՝ 3,3%-ով...

ՀԲՄ-ի նախագահը լավատեսորեն է տրամադրված նաև ընթացիկ տարվա նկատմամբ: Նա կարծիք հայտնեց, որ այս տարվա արդյունքներով հիփոթեքը երկրում կաճի ևս 10%-ով, իսկ հնարավոր է՝ ամբողջ 20%-ով:

Այդ կանխատեսման համար, ըստ պ-ն Ճզմայանի, հիմք է ծառայում կառավարության վերջերս ընդունած որոշումը, համաձայն որի, վարկառուներից գանձված եկամտային հարկը կուղղվի վարկի տոկոսների մարմանը: Այս որոշումը, Ս. Ճզմայանի համոզմամբ, միանշանակ բավարարում է ինչպես բանկերին, այնպես էլ վարկառուներին, իսկ կառավարությունն էլ դրանով լուծում է շինարարության ոլորտի աշխուժացման խնդիրը, ինչը դրականորեն կազդի ամբողջ տնտեսության վրա:

## ԲԱՆԿԵՐՆ ԱՎԵԼԱՑՐԵԼ ԵՆ ՎՃԱՐԱԾ ՀԱՐԿԵՐԸ

02.02.2015




Հայաստանի 1000 խոշորագույն հարկատուների ցանկում 2014թ.-ի չորրորդ եռամսյակի արդյունքում ներառվել են երկրում գործող բոլոր առևտրային բանկերը (21 բանկ), որոնք պետքույժե են վճարել մոտ 37,5 մլրդ դրամ՝ 2013 թ-ի նույն ժամանակահատվածում վճարած 37,1 մլրդ դրամի դիմաց, նշվում է ՀՀ ֆինանսների նախարարության հարկային ծառայության կայքում:

Բանկերի վճարած բոլոր հարկերի կառուցվածքում հարկային մարմինների հավաքագրած հարկերը կազմել են 37,2 մլրդ դրամ, իսկ մաքսային մարմինների հավաքագրած հարկերը՝ շուրջ 345,8 մլն դրամ:

Միաժամանակ ուղիղ հարկերը (եկամտահարկ, շահութահարկ) կազմել են 34,9 մլրդ դրամ, անուղղակի հարկերին բաժին է հասել մոտ 1,9 մլրդ դրամ, ևս 563,3 մլն դրամ են կազմել այլ հարկերը, տուրքերն ու պարտադիր վճարները:

Միաժամանակ բանկերին բաժին է հասել հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի 1000 խոշոր հարկատուների վճարած հարկերի ընդհանուր ծավալի 5,3 տոկոսը:

## «ԱՐԴՉԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-Ն ԸՆՆԱԶՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ 2014Թ. «ՏԱՐՎԱ ԲԱՆԿ»



Նոյեմբերի 27-ին «Արդշինբանկ» ՓԲԸ-ն Լոնդոնում կայացած հեղինակավոր Financial Times-ի «The Banker» ամսագրի կողմից ճանաչվեց Հայաստանի 2014թ. «Տարվա բանկ»:

Տարվա բանկ ճանաչվելու կապակցությամբ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի վարչության նախագահ Միեր Գրիգորյանը նշեց.

«Բանկի նվաճումները, որոնք հաշվի են առնվել «The Banker» ամսագրի կողմից, կրկին ապացուցեցին, որ բանկը կայուն զարգացման և առաջընթացի ճիշտ ուղի է ընտրել»:

ՀՀ բանկային համակարգում Արդշինբանկն առաջատար դիրքեր է ամրապնդել ի շնորհիվ իր հաճախորդների և գործընկերների հետ փոխշահավետ և արդյունավետ համագործակցության, միջազգային լավագույն փորձի և սկզբունքների:

15 տարի անընդմեջ բրիտանական «The Banker» հեղինակավոր ամսագիրն իրականացնում է համաշխարհային մասշտաբով լավագույն ֆինանսական կառույցների գործունեության արդյունքների գնահատման ամենամյա գործընթաց: Յուրաքանչյուր տարի մրցույթին մասնակցում է ավելի քան 150 երկրի ներկայացուցիչ բանկերի ղեկավարներ:

## ՓՆՏՐՎՈՒՄ ԵՆ... ԲԱՆԿԵՐ

09.02.2015



2014թ. Spyur.am գործարար տեղեկատվական կայքում ամենաշատը որոնել են «բանկեր» ծառայությունը:

Անցած տարի բանկերի վերաբերյալ հարցումների թիվը կազմել է 22 384, ինչը ավելին է, քան հաջորդ երկու հորիզոնականների հարցումները միասին վերցրած: Երկրորդ ամենաշատ որոնված ծառայությունը «հյուրանոցներն» են՝ 10 933, երրորդը՝ «տաքսիները»՝ 8547:

Spyur.am-ի օրական այցելությունների թիվը 20 հազ. է: Համակարգում ներկայացված են Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ավելի քան 20 հազ. կազմակերպություն և պետական կառույց:

## ՅՈՒՆԻԲԱՆԿԸ ԿԲԱՑԻ PRIVATE BANKING-Ի ԳՐԱՍԵՆՑԱԿ

12.02.2015



Յունիբանկը Երևանի կենտրոնում կբացի Private Banking-ի մասնաճյուղ և կսկսի զարգացնել անհատական սպասարկման ոլորտը՝ Unibank Privé-ը:

Ինչպես հաղորդել են բանկում, հաճախորդը կարող է դառնալ Unibank Privé-ի մասնակից՝ ձևակերպելով առնվազն 40 մլն դրամ գումարով կամ համարժեք արտարժույթով ավանդ կամ հաշվի չնվազող մնացորդ:

«Համապատասխան եկամտի մակարդակ և կարգավիճակ ունեցող հաճախորդներին Յունիբանկն առաջարկում է լիարժեք ֆինանսական լուծումներ, որոնք ներառում են կապիտալի կառավարման համակարգված մոտեցում, արդյունավետ ֆինանսական պլանավորում և ներդրումային ռազմավարության մշակում: Սպասարկման բոլոր փուլերում հաճախորդի հետ աշխատում է անհատական ֆինանսական մենեջերը», - ասված է բանկի հաղորդագրությունում:

Բանկային ծառայությունների համալիր փաթեթից բացի, Unibank Privé-ի

հաճախորդները ստանում են լրացուցիչ հնարավորություններ և ծառայություններ:



**ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԸ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՐԵԼ Է ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ**

13.02.2015



ՎՏԲ-Հայաստանի բանկը նորացրել ու ընդլայնել է իր Ուսումնական կենտրոնը, որտեղ ընթանում է բոլոր ստորաբաժանումների աշխատակիցների ուսուցումը:

Ինչպես հաղորդել են բանկում, կենտրոնում ուսումնական դասարանները կահավորված ու վերազինված են անհրաժեշտ տեխնիկայով, կան ինտերակտիվ թրեյնինգներ, կլոր սեղաններ և քննարկումներ, բանկի ղեկավարության հետ հանդիպումներ անցկացնելու սենյակներ: Ուսուցումը նախատեսված է ինչպես նոր աշխատակիցների, այնպես էլ այն մասնագետների համար, ովքեր ցանկանում են բարձրացնել իրենց որակավորումը:

Ուսումնական կենտրոնում միաժամանակ կարող է ուսանել 100-120 մարդ:

«ՎՏԲ-Հայաստանի Բանկը մեծ ուշադրություն է դարձնում իր աշխատակիցների ուսուցմանը և գործադրում է բոլոր ջանքերը պրոֆեսիոնալ կադրեր պատրաստելու ուղղությամբ: Ուսումնական կենտրոնի ընդլայնումն ու նորացումը բանկի աշխատակիցների համար պրոֆեսիոնալ ունակությունները զարգացնելու և սպասարկման որակը բարելավելու լրացուցիչ հնարավորություն է», - ասված է բանկի տարածած հաղորդագրությունում:



## ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ 4 ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ

20.02.2015



Ս.թ. փետրվարի 20-ին տեղի ունեցած հանդիսավոր արարողության ժամանակ ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիան հայտարարեց «Բորսայի լավագույն անդամ 2014» մրցանակաբաշխության հաղթողներին: Ներկայացված 12 անվանակարգերից 4-ում Ամերիաբանկը ճանաչվել է հաղթող:

Ամերիաբանկը հաղթող է ճանաչվել «Բորսայի լավագույն անդամ արտարժույթի շուկայում» անվանակարգում և նոր սահմանված «Բորսայի լավագույն անդամ ռեպո և սվոպ գործառնությունների» անվանակարգում: Իսկ դեպոզիտար գործունեության մասով Ամերիաբանկը դարձել է Դեպոզիտար համակարգի լավագույն Հաշվի օպերատոր-պահառու օտարերկրյա արժեթղթերի շուկայում:

Մրցանակաբաշխության ժամանակ առաջին անգամ ներկայացվել է նաև անհատական խրախուսման «Լավագույն գործընկեր առևտրի մասնակից» նոր անվանակարգը, որի հաղթողը որոշվել է գաղտնի քվեարկության արդյունքում: Այս անվանակարգում հաղթող է ճանաչվել Ամերիաբանկի Գլխավոր դիլեր Արզուման Դալլաքյանը:

Նշենք, որ հինգերորդ տարին անընդմեջ կազմակերպվող «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայի լավագույն անդամ» մրցանակաբաշխությունը ներկայացնում է բորսայում և դեպոզիտարիայում ակտիվ ներգրավվածություն ունեցող և Հայաստանում կապիտալի շուկայի զարգացմանը նպաստող ընկերություններին:

## ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ-Ի ՆՈՐ ՔԱՐՏԸ

06.03.2015



ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ-ը ներկայացրել է ArCa Credit՝ նվազող սահմանաչափով վարկային քարտը:

Բանկում նշել են, որ դառնալով ArCa Credit քարտի քարտապան՝ հաճախորդները կստանան 5

տարի գործողության ժամկետով և նվազող սահմանաչափով վարկային գծով ArCa տեսակի քարտ, որի միջոցով ՀՀ ամբողջ տարածքում կարող են կատարել ինչպես կանխիկացման, այնպես էլ վճարային գործառնություններ:

Ի տարբերություն ստանդարտ վարկային գծերի՝ նվազող սահմանաչափով վարկային գիծը յուրաքանչյուր ամիս նվազեցվում է բանկի կողմից նախապես սահմանված հավասարաչափ գումարի չափով՝ հնարավորություն ընձեռելով հաճախորդներին կանոնավոր մարել և գրոյացնել գործող վարկային պարտավորությունները:

Բանկը նաև հնարավորություն է ընձեռում ստանալու մինչև 500 հազ. դրամի կամ համարժեք արտարժույթի նվազող սահմանաչափով վարկային գիծ՝ առանց եկամուտը հաստատող փաստաթղթերի ներկայացման, իսկ քարտով տրամադրվող նվազող սահմանաչափով վարկային գծի առավելագույն սահմանաչափը կազմում է 10 մլն դրամ կամ համարժեք արտարժույթ:

Միաժամանակ՝ ArCa Credit քարտի քարտային հաշվին հնարավոր է կցել ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ-ի թողարկած միջազգային Visa Electron, Maestro կամ MasterCard UEFA Champions League տեսակի քարտեր, որոնց շնորհիվ հաճախորդները հնարավորություն կունենան օգտագործել տրամադրված վարկային միջոցները նաև ՀՀ սահմաններից դուրս:



**ՊՐՈՄԵՏԵՅ ԲԱՆԿՆ ԱՎԵԼԱՑՐԵԼ Է ԿԱՊԻՏԱԼԸ**

09.03.2015



Պրոմեթեյ Բանկը մարտի 6-ին թողարկել և փակ տեղաբաշխման միջոցով շվեյցարական առաջատար բանկերից մեկին է վաճառել €10 մլն ընդհանուր գումարով երկարաժամկետ ստորադաս պարտատոմսեր, ինչի արդյունքում բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալի մեծությունն աճել է 4,2 մլրդ դրամով և կազմել շուրջ 23 մլրդ դրամ:

Պրոմեթեյ Բանկում նշել են, որ երկարաժամկետ ստորադաս պարտատոմսերի թողարկումը բխում է բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հիմնադրույթներից և նպատակաուղղված է դրանում ամրագրված խնդիրների



իրագործմանը, այդ թվում՝ 2017թ. հունվարի 1-ի դրությամբ սեփական ուժերով ապահովելու բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի նորմատիվի՝ ՀՀ ԿԲ-ի կողմից խստացված պահանջի կատարումը:

**ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**  
(GLOBAL FINANCE ԱՄՄԱԳՐԻ ՎԱՐԿԱԾՈՎ)

17.03.2015



Ամերիաբանկը ճանաչվել է Հայաստանի՝ 2015թ. «Տարվա լավագույն բանկ» «Global Finance» հեղինակավոր ամսագրի «Աշխարհի լավագույն զարգացող բանկեր 2015» հատուկ հետազոտության արդյունքում: Արդեն 4-րդ տարին անընդմեջ Ամերիաբանկն արժանանում է ֆինանսական ոլորտում բարձր չափորոշիչ համարվող այս

մրցանակին:

Ինչպես նշում են մրցույթի կազմակերպիչները, «Տարվա լավագույն բանկ» տիտղոսը շնորհվել է բանկի գործունեությունը բնութագրող մի շարք կարևոր ցուցանիշների հիման վրա, մասնավորապես հաշվի են առնվել ակտիվների աճը, շահութաբերության մակարդակը, ռազմավարական նշանակության հարաբերությունների հաստատումը, ծառայությունների լայն տեսականին, մրցակցային գնագոյացման ապահովումը և նորարարական լուծումները:

Նշենք, որ «Global Finance» ամսագրի դասակարգմամբ 2015թ-ի «Տարվա լավագույն բանկ» տիտղոսին արժանացել են նաև այնպիսի խոշոր բանկեր, ինչպիսիք են Wells Fargo-ն (ԱՄՆ), ING-ը (Բելգիա, Հոլանդիա), UBS բանկը (Շվեյցարիա), Ռուսական Sberbank-ը, TBC-ն (Վրաստան) և այլ ֆինանսական կառույցներ:

\* \* \*



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միություն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,
- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ [uba@uba.am](mailto:uba@uba.am):